



օբյեկտներում, որտեղ օգտագործվող նյութերի ու միջոցների առանձնահատկություններից եւ աշխատանքային պայմաններից ելնելով անհնար է արտահագուստի կամ հագուստի վրա անվանաքարտ կրել, անվանաքարտը փակցվում է տվյալ օբյեկտում սպառողին տեսանելի տեղում:

10. Հայաստանի Հանրապետության տարածքում առետրի, հանրային սննդի եւ կենցաղային ծառայությունների ոլորտի անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողի անվանաքարտի վրա, պաշտոնի փոխարեն, կատարվում է "Անհատ ձեռնարկատեր" նշումը եւ գրվում է անհատ ձեռնարկատիրոջ վկայականի համարը:

11. Անհատ ձեռնարկատիրոջ մոտ աշխատողի անվանաքարտի վրա լրացվում է՝ ա/ անհատ ձեռնարկատեր, անունը, ազգանունը,

բ/ վկայականի համարը,

գ/ աշխատողի անունը, ազգանունը,

դ/ աշխատողի զբաղեցրած պաշտոնը: